
ԳԼՈՒԲԱԼԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԼԻԼԻԹ ՇԱՐՈՒՑ

Համաշխարհային գլոբալացման գործընթացների ընդհանուր համատեքստում աշխարհի գրեթե բոլոր երկրներում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ, քանի որ ինտեգրումը և փոխհամագործակցությունն այն երկու կարևոր նախապայմաններն են, որոնք միտված են ապահովելու հարատև կայունությունն պետությունների և ազգերի միջև: Այս փոփոխությունները մի կողմից նպաստում են պետությունների ինքնիշխանության հարցերի որոշակի վերանայմանը և ընդհանուր ձևաչափերի ընդունմանը, որոնք միասնական են դարձնում տարբեր երկրների «խաղի կանոնները» տնտեսական, քաղաքական և մշակութային ասպարեզներում, իսկ մյուս կողմից դրանք լրացուցիչ հնարավորություն են տալիս ճանաչելու սեփական հնարավորություններն ու ամրապնդելու սեփական ազգային և պետական ինքնիշխանության հարցերը: Այդ երկու գործընթացները դժվար է իրականացնել առանց համապատասխան քաղաքականություն մշակելու: Չազնավարական շատ հարցերի լուծում հնարավոր է այդ հիմնահարցերի համատեղ իրականացմամբ: Եվ քանի որ հնարավոր չէ մեկ հողվածում ամբողջությամբ ներառել բոլոր հարցերը, դրական ու բացասական հետևանքները, որոնք առնչվում են գլոբալացմանը, կփորձենք անդրադառնալ են մի քանի հիմնախնդրի:

Միջազգային համագործակցությունը և դրա կայուն զարգացումը այն անհրաժեշտ գործընթացներն են, որոնք ապահովելու են ավելի սերտ շփում ժողովուրդների, պետությունների և անհատների միջև:

Հարկ է նշել, որ մարդկությունը ի սկզբանե ձգտել է գլոբալացման և միավորման՝ առանց սեփական ազգային և պետական նկարագիրը կորցնելու: Արդեն մեկ դարից ավելի է, ինչ ստեղծված են միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, որոնք կարգավորում են պետությունների միջև հարաբերությունները: Դրանցից ամենահայտնիներն են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ՅՈՒՆԻՍԵՖ-ը: Բազմաթիվ միջազգային կառույցներ այսօր էլ շարունակում են կարգավորել ռազմական փոխհարաբերությունները տարբեր երկրների միջև, և խաղաղարար ուժերի գործունեությունը աշխարհի «թեժ կետերում» օգնում է տարբեր երկրներին հասնելու կայունության կամ խաղաղության:

Պետության կարևորագույն բնորոշիչ առանձնահատկությունը, որը տարանջատում է նրան այլ հասարակական կազմակերպություններից, նրա ինքնիշխանությունն է: Ժամանակակից քաղաքագիտության մեջ գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ և մեկնաբանումներ «ինքնիշխանություն» գիտաբանի վերաբերյալ:

Պետական ինքնիշխանությունը նշանակում է ինքնուրույնություն, պետության անկախության իրականացման սեփական քաղաքականությունը ինչպես երկրի տարածքում, այնպես էլ միջազգային հարաբերություններում՝ պայմանով, որ դրանով չի խախտվի այլ պետությունների ինքնիշխանությունը¹: Պետական իշխանության գերակայությունն այն է, որ միայն պետությունն է օժտված իրավունքի նորմեր հրապարակելու հնարավորությամբ: Այդ իմաստով ՀՀ Սահմանադրության և օրենքների գերակայությունը հանրապետության ողջ տարածքում պետական իշխանության գերակայության դրսևորման գլխավոր արտահայտությունն է: Պետական իշխանության գերակայությունը նշանակում է նաև, որ պետության տարածքում այդ իշխանությունից վեր որևէ այլ իշխանություն գոյություն ունենալ չի կարող²: Սա այն ավանդական մոտեցումն է, որն այսօր ընդունված է բոլոր պետությունների կողմից և հնարավորություն է տալիս երկրներին ճանաչելու միմյանց անկախությունն ու ինքնիշխանությունը: Այնուամենայնիվ, ինքնիշխանության գաղափարը շատ բարդ է և ոչ միանշանակ, իսկ բովանդակությունն անընդհատ փոփոխվում է՝ պայմանավորված միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններով: Բացի դրանից՝ ինչպես պետությունների, այնպես էլ ազգերի բացարձակ ինքնիշխանության տեսությունը միշտ սահմանափակվել է տարբեր գործոններով: Վերջին ժամանակներում ակտիվորեն ծավալվող գլոբալացումը կասկածի տակ է դնում պետության բացարձակ ինքնիշխանությունը: Մարդկանց, հաստատությունների, կազմակերպությունների և պետությունների տնտեսական և այլ փոխհարաբերությունների գործընթացը, մարդկության գլոբալ խնդիրների լուծումը ժամանակակից գլոբալացված աշխարհում անհնար են առանց հստակ և համապարփակ քաղաքական կարգավորման, առանց օրենսդրության, որն ապահովում է քաղաքակիրթ հարաբերություններ մարդկանց, կազմակերպությունների և պետությունների միջև:

Գլոբալացման և ինքնիշխանության փոխհարաբերակցությունն առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են վերլուծություն, քննարկումներ և նոր քաղաքականության մշակման անհրաժեշտություն: Խնդիրներից մեկը, որն առաջանում է գլոբալացման գործընթացներից համընթաց, տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի փոխհարաբերությունների կտրուկ բարդացումն է. այն ստանում է «մոլորակային մասշտաբներ»³ անվանումը:

«Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիրը», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը», «Եվրոպական սոցիալական խարտիան», ինչպես նաև «Աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների խարտիան» և «ԵՄ հիմնարար իրավունքների միջազգային խարտիան» միջազգային և տարածաշրջանային այն հիմնական ակտերից են, որոնք անմիջականորեն առնչվում են գլոբա-

¹ Տե՛ս **Монсеев А. А.** Суверенитет государства в современном мире. Международно-правовые аспекты. М., 2006, էջ 246:

² Տե՛ս «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», 23 օգոստոսի 1990 թ.:

³ Տե՛ս **Иванов Н. П.** Человеческий капитал и глобализация // «Мировая экономика и международные отношения», 2004, № 9, էջ 19:

լացման հիմնահարցին, կարգավորում են պետությունների միջև իրավական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները:

Հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը», ինչպես նաև մինչ այն գործող «Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականությունների կանխարգելման ենթահանձնաժողովը» ընդունեցին համապատասխանաբար «Առևտրի ազատականացման և դրա ազդեցությունը մարդու իրավունքների վրա» (Բանաձև 1999/30) և «Մարդու իրավունքները որպես առևտրի, ներդրումային և ֆինանսական քաղաքականության գլխավոր հիմնախնդիր» (Բանաձև 1998/12) մարդկանց իրավունքների և գլոբալացման բանաձևերը⁴:

Ինչ վերաբերում է առևտրի ազատականացմանը, ապա դրան նպաստում են միջկառավարական, միջազգային և տարածաշրջանային հետևյալ հիմնական կազմակերպությունները՝

- Առևտրի համաշխարհային կազմակերպությունը,
- Արժույթի միջազգային հիմնադրամը,
- Համաշխարհային բանկը,

• Համաշխարհային տնտեսական ֆորումը: Վերջինս մասնավոր կազմակերպություն է, որը միավորում է ավելի քան 2000 հզոր ընկերություններ, որոնք ամեն տարի հանդիպում են Շվեյցարիայի Դավոս քաղաքում,

• Տարածաշրջանային առևտրային միությունները, ինչպիսիք են Եվրոպական միությունը, Հյուսիսամերիկյան համաձայնագիրը ազատ առևտրի վերաբերյալ (NAFTA), Ասիա - խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը (APEC)⁵:

Նորանկախ պետությունները, որոնք գտնվում են այնպիսի հզոր զարգացման կենտրոնների հարևանությամբ, ինչպիսիք են Ռուսաստանը, ԵՄ-ն, Չինաստանը, պետք է որոշեն իրենց գերակայությունները, թե որ կառույցին են ցանկանում ինտեգրվել, արդյո՞ք պատրաստ են զոհաբերել քաղաքական և տնտեսական որոշումների կայացման անկախությունը՝ հանուն վերազգային ավելի հզոր կազմակերպություններին անդամակցելու: Եվ արդյո՞ք ինտեգրումն է միակ հնարավոր սցենարը, որը կլուծի զարգացման հետագա խնդիրները: Այս և նմանատիպ հարցերն են, որ ծառայել են Հայաստանի Հանրապետության առջև, քանի որ գտնվում է թշնամական գոտում և այդքան էլ հարուստ չէ բնական պաշարներով:

Բայց ի՞նչ ապագա է սպասվում Հայաստանին: Երկրի երկարաժամկետ հեռանկարները բացահայտելու նպատակով, հաշվի առնելով ներուժի հնարավորությունները և անորոշության գործոնի առկայությունը, կազմակերպվեց «Հայաստան-2020» ծրագիրը: Ծրագրում մասնակցում էին ինչպես Հայաստանի, այնպես էլ Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Կանադայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլ երկրների հայկական համայնքների ներկայացուցիչներ ու այլ շահագրգիռ անձինք: Ուսումնասիրությունն անցկացվում էր սցենարային վարժությունների մեթո-

⁴ Տե՛ս «КОМПАС». Пособие по обучению правам человека с участием молодежи. www.eycb.coe.int/compass/ru/chapter_5/5_8.html

⁵ Տե՛ս «Мировые экономические союзы. Экономические блоки и содружества государств». <http://www.ereport.ru/articles/ecunions/wblocs.htm>

դով⁶: Սոցիոլոգիական մասշտաբային հետազոտությունների ընթացքում հարցված հայերի մոտավորապես 80%-ը (Չայաստանում և սփյուռքում) կարծում է, որ գերակա հիմնահարցերից է տնտեսության զարգացումը, որը միտված է մտավոր կարողությունների օգտագործմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը⁷:

Հարցվածների 75-80%-ի կարծիքով քաղաքացիների բարեկեցության ապահովման գործում հիմնական դերը պիտի կատարի ՀՀ կառավարությունը, իսկ պետական քաղաքականությունը պետք է ակտիվորեն նպաստի արտասահմանյան ներդրումային ծրագրերին: Հասարակության կառուցվածքի և պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե առաջարկվի բարեփոխումների նման ծրագիր, ապա այն աջակցություն կստանա հայերի 70% -ի կողմից⁸:

Չայաստանի մուտքը ավելի մեծ ու զարգացած տնտեսական տարածք հավանաբար կհանգեցնի կայուն աճի: Ինտեգրման պահանջներին համապատասխանելու համար երկիրը պետք է իրականացնի տնտեսության աստիճանական ազատականացում, որը համեմատաբար էժան, սակայն արդյունավետ աշխատուժի առկայության պարագայում կհանգեցնի արագ զարգացման:

Եվրոպական չափանիշների ընդունումը կնշանակի ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ամրապնդում, գիտության և կրթության ոլորտներում հասարակության ներդրումային ծրագրերի ավելացում:

Հետխորհրդային պետությունների համար սա կարծես թե արդյունավետ սցենար է, սակայն Չայաստանի Հանրապետության պարագայում այն բախվում է լուրջ խոչընդոտի: Եվրոպական ինտեգրման հիմնարար սկզբունքներից են ազգային ինքնիշխանությունից մասամբ հրաժարվելը և որոշում կայացնելու իրավունքը վերազգային մարմիններին փոխանցելը: Եթե Չայաստանը պատրաստ է դրան, ապա պետք է ընդունի մի սկզբունքային որոշում, որով իր իրավասությունների մի մասը կսահմանափակի:

Մինչդեռ սոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում հարցվածների մոտավորապես 80%-ը թե՛ Չայաստանում, թե՛ սփյուռքում, կարծում է, որ պետության բացարձակ սուբյեկտիվությունը, այսինքն՝ քաղաքական որոշումների կայացման ինքնուրույնությունը, հայերի միավորման նախապայմանն է⁹: Այլ կերպ ասած՝ եվրոպական ընտրությունը, որին այսօր հակված են հետխորհրդային շատ երկրներ, Չայաստանի դեպքում այնքան էլ որոշակի չէ:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում սփյուռքը կարելի է անվանել պետության հզորությունն արտահայտող, արդյունավետ քաղաքականության ռեսուրսային հիմք: Ըստ այդմ՝ հայկական սփյուռքը մի ուժ է, որը կարող է որոշակիորեն ազդել միջազգային գործընթացների վրա:

⁶ Տե՛ս «Россия в глобальной политике», 2004, № 4. <http://www.archipelag.ru>

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս նույն տեղը:

Հայաստանը սփյուռքը համարում է այնպիսի գործոն, որը կարող է ոչ միայն նպաստել պետության զարգացմանը և տնտեսության դրական տեղաշարժերին, այլև զգալիորեն ամրապնդել Հայաստանի դիրքերը միջազգային ասպարեզում:

Տարբեր երկրներում հայկական ազդեցիկ համայնքների առկայությունը օգնում է ամրապնդելու Հայաստանի և այլ պետությունների երկկողմ հարաբերությունները:

Ցանկացած առաջընթաց, որը միշտ ենթադրում է փոփոխություններ, ունի իր և՛ դրական, և՛ բացասական հետևանքները: Գլոբալացման դրական հետևանքների թվին են դասվում.

- Քաղաքացիության սահմանման վերանայումը. ստեղծվում է մի նոր հարթություն՝ գլոբալ քաղաքացիություն,
- Աճող շարժունակություն և արագացված կապը,
- Սահմանների աստիճանական բացում:

Ինքնիշխան պետությունների վրա ակնհայտ դրական ազդեցություն ունեն նաև ԵՉՔ (European Neighbourhood Policy) հաշվետվությունները և կանխատեսումները¹⁰:

Այսպես, օրինակ, 2003 թ. «Transparency International» կազմակերպությունը հրապարակեց տարեկան հաշվետվություն, որում դիտարկված էր կոռուպցիայի իրավիճակը աշխարհի 133 երկրներում¹¹: Չնայած գործողությունների ծրագրերը ներառում էին հանրային քաղաքականության բազմաթիվ ոլորտներ (օր.՝ բնապահպանական և էներգետիկ քաղաքականություններ, ներգաղթ և սահմանների վերահսկողություն, մարդու իրավունքներ, տնտեսական զարգացում, հակամարտությունների կարգավորում), սակայն կենտրոնական տեղ էին զբաղեցնում հակակոռուպցիոն քաղաքականությունը և արդյունավետ կառավարումը: Հայաստանը գործողությունների ծրագիրն ընդունել է 2006 թ., որը շարունակությունն էր ավելի վաղ ստորագրված ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայագրի¹²:

Այնուամենայնիվ, բազմաթիվ հաստատություններ և անհատ փորձագետներ (օր.՝ մարդու իրավունքների ակտիվիստները, գիտնականներ, տնտեսագետներ և սոցիոլոգներ) մտահոգված են գլոբալացման բացասական հետևանքներով: Ինտեգրման գործընթացների շարքում ինքնիշխանության քայքայմանը նպաստող գործոն է նաև գլոբալ տեղեկատվական դաշտը, որը գրեթե անվերահսկելի է:

Տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է ստեղծել մոտեցնելու տարբեր երկրների, ժողովուրդների, ազգերի և ազգությունների մարդկանց, ուստի հետզհետե նեղանում են պետությունների միջև իրական սահմանները՝ դառնալով ըստ էության «հոգևոր»:

¹⁰ Տե՛ս **Шумилов М. М.** Глобализация: политическое измерение. <http://credonew.ru/content/view/498/30/>

¹¹ Տե՛ս «Санкт-Петербургские ведомости», 10 հոկտեմբերի 2003 թ.:

¹² Տե՛ս «Transparency International», հակակոռուպցիոն պարտավորությունների մոնիթորինգ <http://transparency.am/dbdata/ENP2010-final-am.pdf>

Ինտերնետը և համացանցի լայն կիրառումը չափազանց կարևոր գործիք և միջոց են, որոնք ապահովում են անմիջական շփում մարդկանց միջև, և դրանց շնորհիվ հաղորդակցումը դառնում է ավելի արդյունավետ, որը նպաստում է բազմաթիվ բախումների, հակամարտությունների ավելի հարթ և սահուն լուծմանը: Սակայն այդ տեխնոլոգիաները կարող են նաև լրացուցիչ խնդիրների պատճառ և աղբյուր դառնալ պետությունների ու դրանց սուբյեկտների համար:

Արևմուտքում ստեղծված տեղեկատվական տարածքը հավասարապես ազդում է ողջ մարդկության վրա՝ հրամցնելով արտադրության և սպառման միասնական չափանիշներ: Բացի այդ, համացանցը բաց է տարատեսակ չարաշահումների և սադրանքների համար, այդ թվում՝ քաղաքական:

Հասարակության լայն շերտերի կողմից համացանցի օգտագործման աճը պետության ենթակառուցվածքները դարձնում է խոցելի թիրախ:

Համակարգչային առկա ցանցերը նոր՝ անանուն ու նպատակային հարձակման հնարավորություններ են ընձեռում հենց ներսից: Ահաբեկիչներին արդեն հասանելի են տեղեկատվական տեխնոլոգիաները. նրանք, բարձրացնելով իրենց որակավորումը, իրականացնում են հարձակումներ կիբեր-միջոցների օգտագործմամբ:

Այժմ տնտեսական արտադրողականության և մրցակցության հիմնական աղբյուրներ են դարձել գիտելիքը և տեղեկատվությունը: Տնտեսության նորարարությունները կազմակերպված են տեղեկատվական ցանցերի շուրջ, որոնք չունեն կենտրոն, այլ հիմնված են ցանցային կապերի մշտական շփման վրա: Ձևավորվում է համաշխարհային ֆինանսատեղեկատվական հարթություն, որում միավորվում են բազմազգ կորպորացիաներ, ինչի շնորհիվ շուկան դառնում է ցանցային: Ցանցային նմանօրինակ սկզբունքը շատ արագ ներառվեց և իր կիրառումը գտավ գործարարության ոլորտում, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպություններում և քաղաքացիական կառույցներում:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների (հատկապես համացանց) կիրառման հետևանքով պետությունը կորցնում է վերահսկողությունը ոչ միայն հսկայական դրամական հոսքերի, ռեսուրսների, այլ նաև իր բնակչության հանդեպ, քանի որ համացանցը համաշխարհային հաղորդակցության արդիական գոտում զբաղեցնում է բարձր հորիզոնական:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 20-րդ դարի վերջերից սկիզբ առած գլոբալացման հիմնահարցերը դարձել են պետությունների համար դժվար հաղթահարելի:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունն արդեն ներառված է գլոբալացման գործընթացներում, ենթադրվում է, որ պետք է ապահովել հարատև զարգացում: Վերջինս ավելի կայուն ու արդյունավետ դարձնելու համար պետությունը պետք է մշակի գլոբալ զարգացման հայեցակարգային հիմքեր, որտեղ հստակ կնշվեն երկրի շահերը և գերակայությունները: Դա կապահովի ավելի լայն համագործակցություն արտասահմանյան տարբեր երկրների և կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջազգային լրացուցիչ երաշխիքների ստեղծման հաշվին կնպաստի երկրի պետական անվտանգության բարձրացմանը:

ЛИЛИТ ШАБУНЦ – О проблемах глобализации и суверенитета в Республике Армения. – В статье рассматривается вопрос о том, как коррелируют в Армении глобальные процессы и государственный суверенитет. Чтобы не отставать от происходящих в глобальном масштабе изменений, страна должна идти в ногу с остальным миром и стремиться к интеграции. Глобальные изменения, несомненно, положительно повлияют на её внутривнутриполитическую ситуацию, так как интеграционные процессы расширяют экономические и политические свободы, а это, в свою очередь, укрепит суверенитет и независимость Армении.

LILIT SHABUNTS – The Issues of Globalization and State Sovereignty in the Republic of Armenia. – The article reveals the problem of correlation of globalization processes and the sovereignty in Armenia. Under the current changes, in order to pace up with the world, our country must be integrated in the global processes which will provide us with the sustainable development, and, at the same time, will contribute to the acquiring greater sovereignty. In our view, the global changes will have a positive influence on the country as it will give more opportunities to be sovereign and independent both as a nation as well as a state.